

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ՀՈՎԱՆԻՆ ՆԵՐՔԵՒ

Ա.- ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԿԱՌԱԳԱՎ

Ուրբաթ, 12 Յուլիսի երեկոյեան ժամերկութենէն եւ երկոսասան Առաքելոց յիւստակի նախասօնակէն ետք, Ս. Յակոբեանց Մայր Տանարին մէջ, Լուսարարապետ Գեորգ. Տ. Հայրիկ եպս. Դպրութեան չորս աստիճանները շնորհեց ժառնգ. Վարժարանի 28 սաներուն, որոնց կ'ընկերանար նաեւ Ս. Դրլխադրի մասրան պահապան Միաբան Տրլ. Զաւէն Ասոյեանը: Ապա կատարուեցաւ Սաւկաւազական կոչման արարողութիւնը Ս. Արտոյոյ Ընծայարանի Ուրարակի ուսանող-

ներէն Տրլ. Հայրապետ Թովաթեանի, Տրլ. Յովնաննէս Ղարիպեանի եւ Տրլ. Յովնաննիս Այվազեանի: Ընծայեալները ծննդոյր յառ. ջաջան Դասի մուտքէն եւ Զեւնադրիչ Սրբազան Հօրմէն ստացան կիսասարկաւազութեան աստիճան: Աւարդութեանց խորսուիլակն եւ ժառնգ. Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչը՝ Հոգե. Տ. Յակոբ Վրլ. Վարդանեանը, իսկ աւընքերականները՝ Յ. Կիւրեղ Վրլ. ու Տ. Արեակ Արեղան: Ընծայեալները ապա, կարմիր բազկուորանքի իրենց բեւերուն, մեկնեցան Ս. Յարութեան



Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի հինգ ուրարակի սիւսցուններ, իրենց Հոգե. Տեսուչ Յակոբ Վրլ. ի հետ:

Տանաւ, մասնակցելու Տնօրինական Ա. Տե-
նաց քաւօրին:

Յաջորդ օր, ի ժամ Ա. Պատարազի, Ս.
Գլխաւորի մատան առջեւ, երեքն ալ ձե-
նադրուեցան Աւագ Սարկուազ, ձեռամբ
Լուսարարապետ Գեորգ. Սրբազան Հօր: Ար-
տայող էր պանք երբ բնծայեալները ձեռնա-
բարձ կը դառնային ժողովուրդին, ի նշան
աշխատեմ հրաժարման: Նկեղեցին լեցուն էր
հաւատացեալ ժողովուրդով, ինչպէս նաեւ
բնծայեալներու բնասնեկան պարագաներով,
յաւակապեա ժամանած Լիբանանէն եւ Սի-
րիայէն: Նորբնծաները անմիջապէս սկսան
սպասարկել Ա. Պատարազի խորհուրդին:

Ստորեւ՝ իրենց կենսագրութիւնները, հօ-
մառօս գիծերու մէջ: —

Հայրապետ Սրկ. Թովաղեան ծնած է
Պէյրուք, 16 Մարտ 1940ին: Նախնական
կրթութիւնը ստացած է Պէյրուքի Լուսին-
եան Ազգային Վարժարանին մէջ, որուն
ն. դասարանը աւարտելէ ետք ժառանգաւոր
արձանագրուած է 1953ի Սեպտեմբերին:

1956ին հետացած Գերոյէն, ահն մը Ան-
քիլիասի Գործվանէն ներս շարունակած
իր ուսումը եւ ապա՝ 1960ին վերադարձած
Ս. Արտ եւ աշակեհած Ընծայութեան:

Յովհաննէս Սրկ. Ղարիպեան ծնած է
Հալեպ, 12 Ապրիլ 1937ին: Նախակրթու-
թիւնը ստացած է տեղւոյն Վարդանանց
վարժարանին մէջ եւ բնթացաւորս եղած
1952ին: Ապա ննջուած կեանքի ասպարէզը
եւ ինքնազարգացումով հասած ուսումնական
որոշ ասիւնանի մը: 1961ին բնդունուած
Ընծայութեանի սան եւ յաջողութեամբ աւար-
տած շրջանը:

Յովհաննէս Սրկ. Ալիպաշեան ծնած է
Պէյրուք, 5 Յունուար 1945ին: Նախնական
կրթութիւնը առած է ծննդավայրի Աբգար-
եան Ազգային Վարժարանին մէջ, որուն ն.
դասարանը աւարտելէն անմիջապէս ետք ժա-
ռանգաւոր Սան արձանագրուած է 1956ին:
1961ին աւարտած է ժառանգաւորացի բն-
թացը եւ այժմ Ընծայութեանի Բ. աստիճանը,
եւ կը շարունակէ իր կրթական ուսումը:



Զորա նորբնծաներ երբ կը հրաժարին աշխարհէն, բնդունելու համար
Աստուածային եւ Երկնաւոր Շնորհք:

Բ. — ՉԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԶՈՐՍ ԱՐԵՂԱՆԵՐՈՒ

21 Յուլիս, Վարդավառի Կիրակին, Ամեն. Ս. Պատրիարք Հայր Ս. Յակոբեանց Մայր Տանարի Առաջ Սեղանին վրայ հանդիսատւոր Ս. Պատարագ մատոյց եւ կուսակցիոն Բանաւայ ձեռնադրեց Ս. Արտոյս Ընծայարանի դասընթացները բոլորած չորս Սարկաւազները՝ Վարդան Սրկ. Շամլեան, Պետրոս Սրկ. Աղոյեան, Հայրապետ Սրկ. Թովաթեան եւ Յովնանենա Սրկ. Ղարապետ:

Կոչման արագում արարողութիւնը կ'ստանուեցաւ Շաբաթ, երեկոյեան ժամերգութեան եւ հանդիսատւոր նախասօնակէն եւ: Զորս ընծայեալները ծնւագնաց յառաջաց սնկեղեցւոյ դռնէն մինչեւ դասը, ուր բազմած եւ ձեռնադրիչ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Խորհրդակցեալ եւ Կուսարարապետ Գեորգ. Տ. Հայրիկ Նպա.: Ընծայեալները հետեւիկոսներէ հրաժարել եւ նկեղեցւոյ Սր-

բազան Հայրապետներուն աշակերտի ուխտէ ետք արտասանեցին Հայց. նկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան հանգանակը:

Յաջորդ օր, Ձեռնադրութեան խորհուրդը կ'ատարուեցաւ Տպաւորիչ հանդիսատւորեամբ: Քահանայական զգեստի զանազան մասերու քննութիւնը իւրաքանչեւ աղօթքներով աւարտել ետք, վարագուռուցաւ Առաջ Սեղանը, մինչ դպիրներ սկսան երգել «Խորհուրդ խորինը, դաշն ու արտառուչ: Երբ Ս. Սեղանը բացուեցաւ՝ ընծայեալները Բանաւայական լիւր զգեսատուրումով շարուած էին արդէն բեմին ձախակողմը: Սեղան կը բերուի Ս. Միլոսնը, զոր Ս. Պատրիարք Հայրը, «Առաքելոյ աղաւնոյ» շարակցին երգեցողութեամբ, կը հեղու ոսկեայ ընդունարանի մը մէջ: Օծումի նուիրական պա. հուն, Վարդան Սարկաւազ կը վերակոչուի Տ. Դանիէլ Աբղ., Պետրոս Սարկաւազ՝ Տ. Սամուէլ Աբղ., Հայրապետ Սարկաւազ՝ Տ.



Զորս նորընծաներ, Բանաւայական զգեսատուրումով՝ պատարաս, ընդունելու Ս. Միլոսնի օծումը եւ իրենց նոր անունները:

Վահան Աբղ., իսկ Յովհաննես Սարկաւազ՝ Տ. Տաթև Աբղ.: Ապա Ս. Պատրիարքը կուսայ նորընծաներուն իշխանութիւն՝ մատուցանելու Սուրբ եւ Անմահ Պատարագը: Անկէ անդին կը շարունակուի Ս. Պատարայր, սկսելով «Ողջոյն»էն, երբ նախ Պատրիարքը Սրբազանը կը համբուրէ օծեալ նախանքը իր ձեռնադրուածներուն, եւ ապա եկեղեցական դասը ամբողջ բեմ բարձրանալով, կը համբուրէ միառնած նախանքներն ու ձեռները նորընծաներուն: Իսկ Ս. Պատարագի ատարին, եկեղեցին լցնող հոծ բազմութիւնը կարգաւ կը մօտենայ համբուրելու օծեալ աշերքը նորընծաներուն, երբ անոնք դասին մէջ, լռելեայն կը վերձանեին իրենց առջեւ բացուած Ս. Աւետարանները:

Երեկոյեան ժամերգութենէն ետք կատարուեցաւ վեղարի տոնարարական կարգը: Նորընծաներ, ստակաւագական ջրօրներ իրենց զուխներուն, Աւագ Սեղան բարձրանալով ծունկի կուգան Ս. Պատրիարք Հօր առջեւ ու երկարատեւ աղօթքներ եւ Ս. Գրոց ընթեր-

ցումներ ետք կ'ընդունին անկէ վեղարը, ներկաներուն հետաքրքիր եւ անձկայի նայումներուն տակ: Ապա կը բարձրանան Պատրիարքարան, ուր կը լուսավարուին Զեռնադիչ Ս. Պատրիարք Հօր հետ:

Նորընծաները անկէ անմիջապէս ետք մեկնեցան Ս. Թաւրեան Տաճար, ուր պիտի անցնեն իրենց հառաւորեալ տոնարար, ուսանելով Ս. Պատարագի կարգերը, առաջնորդութեամբ Հոգե. Տ. Կիրեղ Վրդ. Գաբրիէլեանի:

Ստորեւ՝ կենսագրութիւնները նորընծաներուն: —

ՀԱՂԵ. Տ. ԳԱՆԻԷԼ ԱՐԳ. ՇԱՄԼԵԱՆ
ծնած է Հալէպ՝ 1930ին: Նախնական կրթութիւնը ստացած Հալէպի Ազգային Մեհրապեան Վարժարանին մէջ, որուն ընթացքը աւարտած 1946ին: Մինչեւ 1956 նետուած է ապրուստ ծանկելու ասպարէզը, միշտ հետաժառանգ սակայն հոգեւոր կեանքի եւ ինքնագործունէութեան: Վարած է Հալէպի Կիրակեօրեայ դպրոցներու մէջ ուսուցչութեան պատ-



Զեռնադիչ Սրբազան Պատրիարք Հայր եւ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Տեսուչ
Հոգեւոր. Տ. Յակոբ Վրդ. Գր. Նորընծայ Արեղաններուն հետ:

սոն: 1956ի Հոկտեմբերին անցած է Հախան-
սան, Ս. Էջմիածնի Հոգևոր ձեռնարկի իր-
եւ սան: 1957ի Ս. Սեփանոսի սոնին Սար-
կաւագ ձեռնագրում: ձեռնարկի ուսման
երջանք աւարտած 1961ին եւ եկած Հալեպ:
1962ի Ապրիլին կ'ընդունուի Երուսաղէմի
մեւ Ընծայարանի իբրեւ սան, եւ փորձի
երջանեւ մը եւս կը դառնայ Միտքան Ս. Ա-
րսոնոյ եւ աւելի քան մէկ տարւոյ իր կեն-
ցաղով ցոյց կուտայ համեմատ եւ անաղմուկ
ծառայութեան ոգի մը:

ՀՈԳՇ. Տ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐՂ. ԱՂԱՅԵԱՆ
ծնած է Հալեպ՝ 1940ին: Նախնական կր-
թութիւնը ստացած է Հալեպի Սանտիսիմոս
Ազգային Վարժարանին մէջ, որը աւարտած
է 1956ին եւ ամփոփագրուած անցած Երուսա-
ղէմ իբրեւ սան ժառանգաւորաց Վարժա-
րանին, որուն ընթացքը աւարտած է 1960ին
եւ Սարկաւագ ձեռնագրում Օգոստոս աւ-
սուն: Անկէ եւս հետեւած է Ս. Արսոնոյ Ըն-
ծայարանի եռամեայ դասընթացներուն:

ՀՈԳՇ. Տ. ՎԱՀԱՆ ԱՐՂ. ԹՕՓԱԼԵԱՆ,

ՀՈԳՇ. Տ. ՏԱԹԵԻ ԱՐՂ. ՂԱՐԻՊԵԱՆ,

Տեսնել կենսագրական գիծերը Սարկաւա-
գայ ձեռնագրութեան բաժնին մէջ, էջ 215:

ՈՐԵԱՐԻ ՏԵՐԶՈՒԹԻՒՆ

ԴԵՐՇ. ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ Ս. ՀՈՐ ԶԵՆԱՐԻ

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծա-
յարանի 1962-63 տարեշրջանի Դ. դասա-
րանի չորս ասներ, յաջողութեամբ աւար-
տած ըլլալով իրենց երջանքը, Վարժարանի
Հոգե. Տեսչին կողմէ հոգեկազմով մը ներկա-
յալուեցան Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր,
եւ նկատի առնելով անոնց փոքր տարիները,
յարժար դատուեցաւ Ուրար շնորհել անոնց,
արդեաւ որոշ երջանի մը պատասխանեցնել
եւս կարենան արժանանալ Սարկաւագական
ձեռնագրութեան:

Ստորեւ կուտանք անոնց անուններն ու
հակիրճ կենսագրականները: —

Տրց. Գրիգոր Մամնեան, ծնած Պէյրութ
1947ին: Նախնական կրթութիւնը առած
հեղույն Մեսրոպեան Ազգային Վարժարանին
մէջ, որուն երջանքը աւարտելէ եւս, 1961ի
Օգոստոս 31ին կուգայ Երուսաղէմ եւ յիս
ննութեան կը դառնայ ժառանգ. Վարժա-
րանի Դ. դասարանի սան:

Ս. ՅԱՆՈՐԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● **Դշ. 3 Յուլիս.** — Թարգմանչաց Նախա-
ստեակին ի Ս. Յակոբ Նախագահեց Լուսարա-
բաղեալ Դերշ. Տ. Հայրիկ եղբւր:

● **Եշ. 4 Յուլիս.** — Ս. Թարգմանչաց Վարդա-
պետացն մերոց Սանակայ եւ Մեսրոպայ (Տոն ազգային):
Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատա-
րագեց, ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց
երկր. Վարժարանի Տեսչը՝ Հոգշ. Տ. Կիրեղ

Տրց. Խաչիկ Երէցեան, ծնած Երուսաղէմ
1946ին: Նախնական կրթութիւնը առած
հեղույն Ս. Թարգմանչաց Վարժարանին մէջ,
որուն եւ դասարանի ընթացքը 1959ին ա-
ւարտելէ եւս, կրօնաւորելու փափակ մը-
ուած կը մտնէ ժառանգաւորաց Վարժարան
եւ կը դառնայ Ա. դասարանի սան:

Տրց. Յարութիւն Թօփալեան, ծնած Պէյ-
րութ 1945ին: Նախնական կրթութիւնը առած
Էրեւանի Ս. Յակոբ Վարժարանին մէջ, ու-
րուն է. դասարանը կ'աւարտէ 1961ին եւ
նոյն տարւոյ Օգոս. 31ին Ս. Արսոն կուգայ եւ
յիս ննութեան կը դառնայ ժառանգաւորաց
Վարժարանի Դ. դասարանի սան:

Տրց. Կարապետ Տոնիկեան, ծնած Երու-
սաղէմ 1946ին: Նախնական կրթութիւնը
առած հեղույն Ս. Թարգմանչաց Վարժարա-
նին մէջ, որուն Նախապրնարանի բաժնի
1960ին յաջողութեամբ աւարտելէ եւս, կրօ-
նաւորելու փափակով կը մտնէ ժառանգ. Վար-
ժարան եւ կը դառնայ Բ. դասարանի սան:

Սոյն չորս ասներուն հետ Ուրար ստացաւ
հաւա **Տրց. Տիրան Սամուրեան,** որ ծնած է
Փէյրութին (Ամերիկա) 1934ին. նախնական
կրթութիւնը առած է Արլինկթընի Քրօզի
դպրոցին մէջ, ապա երկրորդական ուսումը
շարունակած է Լէնկախիլթընի Գոլէնին մէջ
որուն երջանքը 1952ին աւարտելէ եւս Պոսթըն
Եոնիփլէսիքիին մէջ շարունակած է իր
համալսարանական ուսումը, որուն երջանքը
աւարտած է 1959ին: Կրօնաւորելու փափակ
մըուած 1962 Հոկտեմբերին կուգայ Երու-
սաղէմ, եւ կը հետեւի հայեւեանի, հայկաբա-
նական եւ Ս. Գրական դասընթացներու,
իբրեւ ազատ ուսանող: